

Խոհակաճ

Խոշոր գրված փոքրատառը, Մեծատառի դեր չի տանի Պաշտոն հազած անպատկառը ժողովրդից սեր չի տանի:

Թափառ ամպից վիժած հեղեղն Գոռգոռալով լեռ չի տանի, Ծեծված, քարոզված իշացեղն Տիրոջ կամքով բեռ չի տանի:

Որքան կուզե ժպտա կեղծը, Չի գրավի մարդու հոգին, Թուղթ մրոտող բանաստեղծը, Սին հուշեր կթողնի կյանքին...

Աշնան քամին արևի տակ, Ծառ է փնտրում անդատատան, Ով ձեռք գցի դահճի գդակ, Շուտ կտիրե պալատ – ոստան:



Թե հարձակվի վրադ առյուծ, Ֆիրաններում սեղմվես, փառք է, Վար ինչպե՞ս կատվին գծում, Գերի դառնաս, ձգես կառքեր...

Վար աշխարհն է պատվում, Արեգակի շուրջը հավերժ, Բախտը մարդուն հեշտ չի տրվում Ոչ էլ բարիքն է հորդ ջրվեժ...

Ամեն քար ու քիի համար, Ստեղծողն է քրտինք քանում, Ամեն ծառ ու բարի համար, Գիշեր ու գոր թաթն է ծամում:

Տառապում է, դադար չունի, Կյանք է գոհում, կյանքի համար, Թևածում է հանց թռչունի, Նման, դեպի երկնակամար:

Երագուն է խաղաղություն, Թեկուզ քրտինքը ծովանա, Արարի ու բար տա մարդուն, Թեկուզ հավերժ հոգսում մնա:

Թեկուզ պաշտոն հազած լաթը, Շահագործի ու վայելի, Չի արյունի նա իր կաթը, Կծավալի քրտինքն էլի:

Ոնգեղջյուրներ շուրջը հազար, Ուղտը գետին ո՞նց մոտենա, Թեկուզ կյանքից լինի բեգար, Ջուր չի խմի ու հազենա:

Պիտի քայլի անապատով, Համբերատար բեռը տանի, Մինչև մի օր Աստված մատով Տեր – տնօրենները խոտանի:

Վար առանց արարողի, Տերը ինչպե՞ս գնա յուլա, Մարդ - արեգից լույս չշողի, Անբան էակն ինչպես ցուլա...

Վար ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի, Խոշոր գրվի փոքրատառը Արդարություն երբ չգիտի Ինչպես դատի անպատկառը...

Վար ինչո՞ւ դասեր լինեն, Խասեր լինեն բազկաթռչին, Աղբատները բարիք հինեն, Հարուստները հենվեն գոռին:

Իրար կողքի շնչող մարդիկ, Ինչո՞ւ իրար փետրաթափեն, Դառնան իրար խոցող մարտիկ, Շողջորթմամբ իրար խաբեն:

Չէ, դաժան է ես աշխարհը, Թշվառն էլի պիտի բոցե, Ջավթե իրեն սուրբ նշխարը, Ու տերերի սիրտը բոցե:

Վի, Տեր Աստված, արդար եղիր, Ծուռ տուր բախտի անիվն հաճախ, Ստեղծածիդ միտքը պեղիր, Ու մի թողնիր դառնան «Դաշաղ»...

Հրանտ Սարգսյան



«Ճամաչել պիմատություն և պիբառ, իմանալ պրանս հանճարդ»

Սովորե՛՛ր Հայերեն
Учите армянский!

խոսե՛՛ր Հայերեն
Говорите по-армянски!

խորի՛՛ր Հայերեն
Думайте по-армянски!

Վարե՛՛ր Հայերեն
Живите по-армянски!

Наиболее употребительные слова и выражения. Русский текст, литературный текст и диалект

Настоящий – нэрка, искакан – шиныхван, искаган
Настоящее время – нэрка жаманак – шиныхван жаманагы
Настроиться – трамадрэл – хуррмыш ылал
Начинать – скысэл – башлаэл
Начинка – хориз – хоиз
Недобрый – чар – гэш
Неженатый – чамуснацац, амури – лэвэнд, чикаркывац (тхамард)
Незамужняя – амури кин – чикаркывац ахчиг (гиммашт)
Некрасивый – тгэх – нов, айлягерб
Немного – ми кич – кичим
Ненавидеть – атэл – дэснэл чузэнэл
Несмотря – чнааяц – чинаэлов, чнааяц
Несчастье – джбахтутюн – хатэ
Нечистоплотный – анмакур – писур
Ноготь – ехунг – охунг

Обессиленный – ужаспар – аранц ужи, һокнац
Обет – хостум – ухт, хостум
Обманщик – хабэба – айначи, сут хапан
Обычно – соворабар – арһасараг
Огромный – һскаякан, аһагин – ба-лабан
Однажды – ми ангам – мэг анкам
Одолеть – һахтаһарэл – һахэнкал
Один за другим – мэки мүси һэтэвиц – эдэв эдэви
Одним словом – ми хосков – мэг хосков
Он был печален – на тхур эр – нара сирды годрац эр
Опять – нориц, кркрин – норэн, гэнэ
Орать – бхавэл, горал – ганчэл
Осенний – ашанаин – куйзван, ахацкин
Осторожно – згушорэн – соловэн
Отдыхать – һангстанал – ял анэл
От меня – инцаниц – индзимэн
Охотно – сиров – һавэсов
Ошибаться – схалвэл – ялнышвэл, схалвэл
Пар – голорши – буһ

Падать – ынкнэл – ийнэл
Пачкаться – кэһтотвэл – ачырвэл
Пена – прпур – кобух
Переезжать – тэһапохвэл – гочвэл
Петь – ергэл – еркэл
Пешком – вотков – яаян
Плавать – лоһал – елда анэл
Подарить – һывирэл – баһиш дал
Подарок – һывэр – баһиш, пэһкэш
Под вечер – ерэкоян дэм – иргван сэмт
Под утро – аравотян дэм – луси сэмт
Пожалеть – хыхчал – мэхкынал
Полениться – цуланал – иһэмиш ылал
Полно – лыки – иппалинк илинк
Польза – огут – файда, огут
Поспорить – вичэл – джэнг анэл
Правильно – чышт э – шидаг э, хошт э
Правый – ач – сахи
Предполагать – ентадрэл – тамил анэл
Причина – пачар – маһана.
Использован материал из книги А.Г. Малхасяна «Русско-армянский разговорник», Ростов-на-Дону, 2008г.



ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

«Երանի է ձեզ, երբ ձեզ նախատեն և իմ պատճառով ձեր մասին ամեն չար խոսք ստելով ասեն: Յնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանզի այդպես հալածեցին մարգարեներին, որ ձեզանից առաջ էին»

Այս իններորդ՝ եզրափակիչ երանին, բացահայտում է հավատքի փորձության բուն իմաստը և նպատակակետը: Այստեղ արդեն արդարության համար հալածելուց անցում է կատարվում դեպի մարդու համար ամենածանր փորձությունը, որը համբերելն է նախատիքների, հայիոյանքների, բանբասանքների և չարախոսությունների: Ըստ հայերի՝ մարմնավոր տառապանքների և վշտերի համար կան զանազան մխիթարություններ՝ սպեղանիներով, մարմնական ճիգերով և այլն, սակայն նախատիքների և բանբասանքների համար չկան մխիթարություն միջոցներ: Այս երանին հատկապես շեշտադրում է իմ պատճառով, որպեսզի ցույց տա, որ խոսքը ոչ թե ինչ-որ արժանիքների, առաքինությունների, դիրքի կամ օժտվածության համար բանբասանքի և չարախոսելու մասին է, այլ սուտ խոսքերի, որոնք ասվում են հատկապես այն պատճառով, որ այդ մարդը քրիստոնյա է՝ Քրիստոսի հետևորդ: Այդպիսի նախատիքների մեթոդակցին առաքյալները և սուրբերը: Նրանց անվանում էին կախարհներ, մոլորեցուցիչներ, ժանտագործներ և այլն, երբ տեսնում էին նրանց գործած նշանները և հրաշքերը: Այս երանին ոչ թե պատվիրում է սուս


համբերել, այլ ցնծալ և ուրախանալ այն բաների համար, որոնք ամենից շատ են մարդկային հոգուն տրտմություն պատճառում: Քրիստոնյան պետք է ցնծությամբ և ուրախությամբ ըմպի անարդարների և չարախոսությունների դառնության բաժակ՝ որպես հոգևոր նորոգության գլխավոր դեղամիջոց: Եթե բարիք ես գործում, մի՛ սպասիր հատուցման, այլ անարգանքի, եթե ավետարանում ես, մի՛ սպասիր մեծարման, այլ արհամարհանքի, եթե օրհնում ես, մի՛ սպասիր երախտագիտության, այլ անեծքի և այլն: Այսպես պետք է վերցնել խաչը և հետևել մեր Տիրոջ՝ մինչև վերջ նմանվելով Նրան և Աստվածասեր սուրբերին, որոնց համար գերագույն ուրախությունը՝ հանուն Քրիստոսի անարգվելն էր: Ովքեր չարչարակից և խաչակից եղան Քրիստոսին, նրանք նաև տնկակից են Նրա հարությանը և ապրում են հարության կյանքով: Այդպիսիներին սպասում են բազում պարգևներ երկնքում: Բոլոր երանիները խոսում են որոշակի պարգևների մասին, իսկ այստեղ ասվում է, որ դրանք շատ են երկնքում՝ ցույց տալով նախ անարգանքները ուրախությամբ ընդունելու մեծությունը և ապա դրան սպասող վարձատրության անճառելիությունը: Իսկ

մարգարեների հիշատակումով ներածում է իր երկրորդ Գալատյան սպասումի մեջ, երբ պիտի լինեն համբերիչները Հարությունը և Դատաստանը, և դեմ-հանդիման պիտի տեսնեն այն բարիքները, որ Աստված պատրաստել է իրեն սիրողների համար: Ինչ երանիներով Տերը ցույց է տալիս հոգևոր վերընթացի ճանապարհը, հոգևոր կյանքի աստիճանները և պտուղները: Սկզբը մեղքից հրաժարումն ու խոնարհությունն է, իսկ լրումը՝ երբ մեկը ցնծությամբ և ուրախությամբ է ընդունում անարգանքներն ու չարախոսությունները: Ինչ որ Տերն ուսուցանեց «Լեռան քարոզում», ինքն էլ իրագործեց իր երկրավոր կյանքում. խոնարհությամբ և հեզությամբ անցավ մեր կյանքի տրտմությունների միջով, բայց շնորհեց մեզ մեղքից զատագրվելու ուրախությունը, ծաղրվեց, հայիոյվեց և չարախոսվեց, բայց իր գործությամբ փրկեց մեզ բանասրկուի ժառանգությունից և խավարային ուժերից: չարչարվեց և խաչվեց, բայց խաչի վրա աղոթեց իրեն խաչողների համար, մահվան խավարի մեջ մտավ, բայց իր հրաշափառ հարության մեջ հավիտենական կյանք և փրկություն պարգևեց: «Գանձասար» աստվածաբանական կենտրոն

Հրեայի որդին

(շարունակություն) Տիգրան Հոնենցը տխրաբախիծ, անելանելի մտածումներով քայլեց փողոցից - փողոց, ամաչեց մտնել իր եկեղեցի մոտ վառել, աղոթել, արտասվելով հիշեց իր վաղեմի ընկերոջն ու շարժասանդակներով իջավ ներքնահարկի շուկան, ուր ընկերը՝ Աղաբեկը, իրենից նվեր ստացած խանութն էր շահագործում: Դեռ հեռվից նշմարեց և ուրախությամբ ասաց. - Այ- բարով ես վերադարձել, ազնիվ ընկեր, ուխտդ ընդունելի լինի: Բայց երևում է բարվոք չէ վիճակդ, պատմիր - պատմիր, էլ ո՞ր օրվա համար ենք ապրում, ձեռքիցս եկածը չեմ խնայի: - Է~, Աղաբեկ ջան, հապա էսպես էսպես, ես իմ ձեռքով տունս քանդել եմ ու նորոգել չեմ կարող: Այդ անգութ հրեան ողջ ունեցվածքս գավթել է: Մտածում-մտածում եմ, մի միջոց չեմ գտնում, որ նրան ծնկի բերեմ, վրեժս լուծեմ, կորուստըս հետ ստանամ: - Լսի՛ր, Տիգրան, Գագիկ արքայի խորհրդատուն իմաստուն ու բարի մարդ է, դու անվանի բարեգործ ես եղել, գնա՛, դիմիր նրան: Նրանից բացի ոչ-ոք չի

կարող քո դարդին դարձան անել, գնա՛՛ վստահորեն, նա ծնկի կբերի ճշմարտությունը թունավորողին: ... Ու Տիգրանը գնում է պալատամերձ դղյակի մոտ, հանդիպում է Գագիկ արքայի խորհրդատու Հակոբ Պատվելուն՝ վաղեմի ծանոթին, որն իրեն տուն է հրավիրում և իմանալով եղելությունը՝ ասում է. - Իմ խելոք ու բարեգործ ընկեր, այլևս մի մտահոգվիր, իմ պարտքն է օգնել բարուն, անմեղին և պատժել չարին: Այդ ստահող ազնվամուն վաստակածներն ամենից մեծ խաբեբաներն են: Նա առանց չարչարանքի օգտվել է քո միաստությունից: Այժմ գնա այդ հրեայի մոտ, եթե որդի ունի, բարեկամաբար խնդրիր, որ թույլատրի մի շաբաթ գա քեզ օգնի մյուս պարտքերդ հավաքել: Համոզված եմ, որ քո խաթրը շահելու համար կհամաձայնի: Երբ որդուն մի շաբաթով կվերցնես, նորից կգաս մոտս, որ համազոր պատճամիջոցը կռնեք: ... Տիգրանը կեղծ բարեպաշտությամբ հրեայի որդուն տանում է իր տուն և շտապում իմաստունի մոտ:



- Հիմա կգնաս, մի կապիկ կգնես և նաև հրեայի դիմանկարը: Շաբաթ օրն առավոտյան կապիկին հետդ առած կգաս ու կսպասես Սուրբ Փրկիչ եկեղեցու մոտ: Երբ ես ու արքան մոտենանք, դու կապոցը վայր կգցես, կապիկին մոտը կկանգնեցնես և կգոչես՝ Հակոբ Պատվելի~: Հակոբ Պատվելի, տեսար ինչ հրաշք պատահեց, հրեայի որդին, որ ինձ ուղեկցում էր, կապիկ դարձավ: Մենք կմոտենանք, ես կասեմ. - Վա՛հ, թագավոր, իրոք անցնելիս ես նշմարեցի մի պատանի կապոցը ձեռքին գալիս էր այդ մարդու հետ և ահա նայեք, թե ինչ եղավ ... Թագավորն անայայնա կհաստատի իմ խոսքը, իսկ թագավորի ասածն ասած է... (շարունակելի) Հրանտ Սարգսյան